ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 173 – Ա/1 20 մայիսի 2019 թ

«ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼՈՒՍԻՆԵ ՄՈՒՍՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԼԱՆ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Մուսոյանին 2019 թվականի մայիսի 20-ից մինչև 2019 թվականի հուլիսի 5-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում մասնագիտական վերապատրաստման դասընթացին՝ առանց աշխատավարձի պահպանման:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները 2019 թվականի մայիսի 20-ից մինչև 2019 թվականի հուլիսի 5-ը ներառյալ դնել «Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Ռուսլան Գալոյանի վրա:

3. Լուսինե Մուսոյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի հուլիսի 8-ից:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին:

ՄԱՐԶՊԵՏ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ